ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հոկտեմբերի 2018 թվականի N 1256 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՔԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-290-30.03.2018,07.09.2018-ՊԻՄԻ) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 1
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

26 ապրիլի 2018 թվականի N 503 - Լ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Հավանություն տալ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-290-30.03.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. ապրիլի 27

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ ապրիլի 2018 թվականի N -Լ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասը՝

1. Հավանություն տալ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-290-30.03.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությանը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Կ. Կարապետյան**

2018 թ. ապրիլի _
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-290-30.03.2018-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություն չունի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Վերը նշված նախագծով առաջարկվում է սահմանել, որ վարչական պատասխանատվության ենթարկված անձի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան դրա՝ օրենքով սահմանված կարգով անբողոքարկելի դառնալը, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան դրանց՝ օրենքով սահմանված կարգով անբողոքարկելի դառնալը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ վերոնշյալ նախագծի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0095, ք.Երևան, Մ.Բաղրամյան պող.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարչապետ

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Միհրան Պողոսյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-290-30.03.2018-ՊԻՄԻ-011/0):

2018թ. մարտի 30

ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-290-30.03.2018-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.
«Վարչական պատասխանատվության ենթարկված անձի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան դրա՝ օրենքով սահմանված կարգով անբողոքարկելի դառնալը, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան դրանց՝ օրենքով սահմանված կարգով անբողոքարկելի դառնալը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

Անհրաժեշտությունը. Նախագծի ընդունումն անհրաժեշտ է վարչական տուգանքի ենթարկված անձանց տուգանքների վճարման համար ողջամիտ ժամկետ տրամադրելու համար: **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները ներկայումս.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Այսինքն՝ տուգանքները վճարելու համար խախտողին տրամադրված է տասնհինգօրյա ժամկետ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 01.03.2017թ. ՀՕ-50-Ն օրենքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 305-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն ուժը կորցրած ճանաչվեցին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն՝

1. Վարչական բողոքը կարող է բերվել՝

ա) վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում.

Իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի

1. Դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Դրամական պահանջները սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հարկադիր կատարման ներկայացնելիս վարչական մարմինը ներկայացնում է դրամական պահանջները հավաստող համապատասխան վարչական ակտը, այդ ակտի մասին սույն օրենքով սահմանված կարգով իրազեկելը կամ այլ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը, ինչպես նաև ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը հավաստող ապացույցները և կատարման վերաբերյալ գրություն:

Այսինքն՝ իրավասու անձի կողմից վարչական ակտ կայացնելուց հետո վարչական տուգանքի ենթարկված անձն իրավունք ունի վարչական ակտը բողոքարկել դրա օրինական ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում՝ մինչև դրա անբողոքարկելի դառնալը: Իսկ մինչև վարչական ակտի անբողոքարկելի դառնալը վարչական մարմինն իրավունք չունի այն ուղարկել հարկադիր կատարման:
Վարչական տուգանքի վճարման 15-օրյա ժամկետ սահմանելն իրավական հետևանք ուներ այն ժամանակ, երբ նշված ժամկետում չվճարելու դեպքում տուգանքի մայր գումարի վրա տույժ էր գումարվում: Բայց համապատասխան օրենսդրական փոփոխությունից հետո այլևս տույժեր չեն ավելանում, ուստի տուգանքի վճարման 15-օրյա ժամկետի սահմանումը կրում է ձևական բնույթ և 15-օրյա ժամկետի խախտման դեպքում ոչ մի իրավական հետևանք վրա չի հասնում,

մինչև վարչական ակտի անբողոքարկելի դառնալու համար սահմանված 2-ամսյա ժամկետի լրանալը /բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի/:

Ստացվում է, որ Օրենսգրքով նախատեսվում է հստակ ժամկետ, սակայն օրենսդրական փոփոխությունների արդյունքում այն կորցրել է իր նպատակային նշանակությունն ու անհրաժեշտությունը՝ ժողովրդին դնելով արհեստածին սահմանափակումների մեջ:

Իսկ բողոքարկված և գանգատարկված վարչական ակտերի պարագայում նույն հոդվածը իմպերատիվ պահանջ է նախատեսում, որ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ վարչական ակտը պետք է վճարվի գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Այսինքն՝ ստացվում է, որ վարչական ակտի վճարման պայման է հանդիսանում գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման պահը, այնինչ՝ պետք է նախ այդ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին որոշումն օրինական ուժի մեջ մտնի, որից հետո նոր սահմանվի վճարման ժամկետ:

Որպես կանոն, տուգանքները սահմանված ժամկետում չեն վճարվում, հետագայում դրանք բռնագանձելու համար վարչական մարմինները հայց են ներկայացնում դատարան կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով դիմում ներկայացնում ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն, ուստի անհրաժեշտ է վարչական պատասխանատվության ենթարկված անձանց մոտ լրացուցիչ շահագրգռվածություն և հնարավորություն առաջացնել տուգանքները վճարելու համար: Ներկայումս, ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակով պայմանավորված, բազմաթիվ տուգանքներ սահմանված 15-օրյա ժամկետում չեն վճարվում, իսկ նշված ժամկետը լրանալուց հետո անձը մտածում է, որ եթե 15-օրյա ժամկետում չի վճարել, ուրեմն այլևս հնարավորություն չունի վճարելու և վարչական ակտը գնալու է ԴԱՀԿ ապահովող ծառայություն: Սակայն պրակտիկայում, եթե վարչական ակտը չվճարվի 15-օրյա ժամկետում, այլ վճարվի օրինակ՝ 50-րդ օրը, ապա միևնույնն է ոչ մի հետևանք այն չի ունենալու, ոչ մի իրավական և փաստացի հետևանք վրա չի հասնում ակտը 15-օրյա ժամկետից հետո մինչև դրա անբողոքարկելի դառնալը վճարելու դեպքում:

Կարգավորման նպատակը. Նախագծով առաջարկով փոփոխության նպատակը ժողովրդին առավել լայն հնարավորությունների ընձեռումն է, արհեստածին սահմանափակումների վերացումը:

Ակնկալվող արդյունքը. Նման փոփոխության արդյունքում, նախ, անկասկած, կավելանա տուգանքները վճարողների թիվը, երկրորդ՝ վճարված տուգանքների քանակը, երրորդ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջե մուտքագրվող գումարների չափը, չորրորդ՝ կթեթևանա վարչական պատասխանատվության ենթարկվածների սոցիալական ծանրաբեռնվածությունը: Իսկ նման պայմաններում, բնականաբար, կթեթևանա ինչպես դատարանների և ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության, այնպես էլ տուգանք նշանակած վարչական մարմինների ծանրաբեռնվածությունը՝ պայմանավորված դատարան և ԴԱՀԿ ապահովող ծառայություն՝ գումարների բռնագանձման պահանջով դիմելու գործառույթի կրճատումով: